ԵՐԵՎԱՆ

ՀԱՅԱՑՔ ԱՊԱԳԱՅԻՑ

CAFESJIAN
CENTER FOR THE ARTS
www.cmf.am

2012թ. հոկտեմբերի 11-ին բացված «Երևան. հայացք ապագայից» ցուցադրությամբ Գաֆէսճեան արվեստի կենտրոնը շարունակում է միջթանգարանային համագործակցության իր ծրագիրը՝ համատեղ ցուցադրություններ կազմակերպելով քույր-թանգարանների հետ: Ռուսական արվեստի թանգարանի հետ համատեղ «Գարնանային մոտիվներ» ցուցահանդեսը Գաֆէսճեան արվեստի կենտրոնում առաջինն էր այս ծրագրի շրջանակներում: Երկրորդ ցուցադրությունը կազմակերպվեց Երևանի պատմության թանգարանի հետ և ազդարարեց 2012 թ. Էրեբունի-Երևան տոնակատարությունների սկիզբը:

Ցուցադրությանը ներկայացված են հայ ազգի մեծանուն արվեստագետների գեղանկարչական և գրաֆիկական աշխատանքներ՝ անցյալ դարի առաջի կեսի երևանյան համայնապատկերներով: Միևնույն ժամանակ ընդգրկված են ժամանակակից Երևանի տարբեր լուսանկարներ, որոնք խորհրդանշում են մեր քաղաքի առաջընթացը և ապագայից հայացք ուղղորդում պատմական Երևանին:

Հավատարիմ մնալով իր առաքելությանը՝ «համաշխարհային արվեստի լավագույնը ներկայացնել Հայաստանում և Հայաստանի լավագույնը ներկայացնել աշխարհին», նման համատեղ ցուցադրությունների կազմակերպմամբ Գաֆէսճեան արվեստի կենտրոնը նպատակ է հետապնդում միջազգային չափանիշներին համապատասխան իր ցուցասրահներում ապահովելու համագործակից թանգարանների ներկայությունը, դրանով իսկ մեր հանրությանը ավելի մերձեցնելու ներկայացված արվեստին և Հայաստանի թանգարաններն ավելի ճանաչելի դարձնելու միջազգային հանրությանը: Վստահ եմ, որ Գաֆէսճեան արվեստի կենտրոնում նորովի ներկայացված Երևանի պատմության թանգարանն էլ ավելի հասանելի կդառնա արվեստասեր հասարակության համար՝ ինչպես այս ցուցադրության ընթացքում, այնպես էլ՝ ծրագրի ավարտից հետո:

«ԵՐԵՎԱՆ. հայացք ապագայից» ցուցադրությունը, շարունակելով հայ մշակույթի երախտավորների նախաձեռնությունը, նորովի է մատուցում Երևանին նվիրված ստեղծագործությունների ընտրանին, վերարժևորում դրանց գեղարվեստական և պատմական դերը: «Գարունը Երևանում», «Աշունը Երևանում», «Բակ Երևանում», «Ձորագյուղ», «Կառուցապատվող Երևան», «Հին Երևան», «Փողոց Երևանում» և քաղաքի այլ տեսարաններ են բյուրեղացած Մ. Սարյանի, Փ. Թերլեմեզյանի, Ս. Առաքելյանի, Գ. Գյուրջյանի, Վ. Գայֆեճյանի, Տ. Տեր-Վարդանյանի, Խ. Եսայանի, Ա. Մամաջանյանի, Հ. Կոջոյանի, Ս. Թարյանի և ցուցադրված մյուս հեղինակների աշխատանքներում: Հայ մեծանուն նկարիչների կողմից վրձնած ստեղծագործությունները 20-րդ դարի սկզբների Երևանի յուրատեսակ գեղարվեստական վավերագրերն են, որոնցում հնամենի քաղաքը 21-րդ դարի երևանցու առջև վեր է խոյանում իր կավաշեն տներով, գողտրիկ բակերով և թաղերով, աշնանային և գարնանային համայնապատկերներով:

Պատմական քաղաքը հավերժացնող ձոներգ-բնանկարներին նոր երանգ և բնութագիր է հաղորդում ցուցադրությունում ընդգրկված ժամանակակից Երևանը պատկերող լուսանկարների ընտրանին: Երևանի այցեքարտը դարձած և ապագայի քաղաքը խորհրդանշող ճարտարապետական հուշարձանների, մշակութային կառույցների և տեղավայրերի լուսանկարները արտացոլում են հնամենի քաղաքի թռիչքը, իսկ լուսանկարներից ժպտացող աչքերը ճառագում են ապագայի լույսը և հազարամյակների ուժով վստահ հայացք ձգում դեպի գալիքը:

«ԵՐԵՎԱՆ. հայացք ապագայից» ցուցադրությունը մեկդարյա էքսկուրս է պատմական քաղաքից դեպի ապագայի Երևան, որի ընթացքում 2794-ամյա քաղաքը դիտողին է ներկայանում հավերժացած ժամանակների խաչուղիներում:

Աստղիկ Մարաբյան, *արվեստաբան*
Հանրային ծրագրերի գծով փոխտնօրեն, «Գաֆէսճեան Թանգարան» հիմնադրամ

Մարտիրոս Սարյան (1880-1972)
Գարունը Երևանում, 1928

Կտավ, յուղաներկ
66 x 70 սմ

Փանոս Թերլեմեզյան (1865-1941)
Աշունը Երևանում, 1935

Ստվարաթուղթ, յուղաներկ
60 x 80 սմ

Գաբրիել Գյուրջյան (1892-1987)
Կոնդ (Թափաբաշ), 1924

Կտավ, յուղաներկ
40 x 49,5 սմ

Սեդրակ Առաքելյան (1884-1942)
Բակ Երևանում, 1922

Կտավ, յուղաներկ
25 x 31 սմ

Սեդրակ Առաքելյան (1884-1942)
Ձորագյուղ, 1922



Ստվարաթուղթ, յուղաներկ
30 x 22 սմ

Վահրամ Գայֆեճյան (1879-1960)
Տեսարան հին Երևանից, 1927

Կտավ, յուղաներկ
34 x 52 սմ

Տարագրոս (Տարագրոս Տեր-Վարդանյան) (1878-1953)
Գարունը Երևանում, 1927

Կտավ, յուղաներկ
33 x 103 սմ

Տարագրոս (Տարագրոս Տեր-Վարդանյան) (1878-1953)
Աշունը Երևանում, 1935

Կտավ, յուղաներկ
36 x 110 սմ

Խաչատուր Եսայան (1909-1977)
Բակ Երևանում, 1940-ական թթ.

Ստվարաթուղթ, յուղաներկ
17 x 22 սմ

Ստեփան Աղաջանյան (1863-1940)
Ձմեռը Երևանում, 1930-ական թթ.

Կտավ, յուղաներկ
45 x 55 սմ

Գուրոս (Գուրգեն Պարոնյան-Հովսեփյան) (1905-1981)
Տեսարան Կոնդի մզկիթից, 1937



Ստվարաթուղթ, յուղաներկ
35 x 51 սմ

Գևորգ Հովսեփյան (1880-1937)
Հրազդանի աջ ափը, 1925

Խառը տեխնիկա
24 x 46 սմ

Արարատ Ղարիբյան (1903-1952)
Լենինի հրապարակի ջրավազանի կառուցումը, 1950

Թուղթ, մատիտ
36 x 54 սմ

Արարատ Ղարիբյան (1903-1952)
Շարիաթսկայա փողոցը, 1935

Թուղթ, ջրաներկ
22 x 30 սմ